

ՊՈՏԱԽԵԿԱՆ ԳՐԱԴՐԱՆ

4

ԲԵՎԻՇԱԿԱՆ ԱԵՐԻ

4

ՆԵԿ. ԱՍ. ՐԳ. ԱՅ. Ն.

# ԿԵՆԴԱՆԻ ՃՐԱԳՆԵՐ



1927

087.1

U - 25

ՊԵՏՐՈՒՏ-ՅԵՐԵՎԱՆ

23 JUN 2009

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 4

ԲՆԱԳԻՑԱԿՈՆ ՍԵՐԻԱ

№ 4

087.1  
U-25 նիկ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԵՆԴԱՆԻ =  
= ՃՐԱԳՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎՈՆ 1927

21765

## ԿԵՆԴԱՆԻ ՏՐԱԳՈՒՐ

# ԹԵ Ի՞ՆՉՊԵՍ ՄԵԶ ՀԱՄԱՐ ԱՍՏՂԱԼԻՑ ՅԵՐԿԻՆՔ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆՔ

Գյուղում, մեր տան կողքին, մի կիսափուլ գոմ կար: Նրա ծածկի գերաններից մի քանիսն արգեն փառել, թափ-վել ելին, իսկ մյուսներն ել՝ ծռմռվել, տեղահան ելին յե-ղել: Նայողն այսպես եր կարծում, թե ահա ամբողջ կը-տուրը փուլ պիտի գա:

Մի ամառային որ, մութն ընկնելուց հետո, լես և իմ  
ընկեր Ռուբենն անցնում ելինք այդ գոմի մոտով, և, լեզր  
հանկարծ աչքս ընկավ նրա փլած մասին, այնտեղ ինչ  
վոր աղոտ լուս տեսա: Յերկի, քեռի Պետրոսն այնտեղ  
բան ե փնտրում ճրապի լուսով,— մտածեցի լես և արագ  
քայլերով մոտեցա գոմին: Ռուբենը լուռ հետեւց ինձ:

— Քեռի, եղ լնչ ես կորցրել այստեղ, — հարցը ի յես:

Պատասխան չկար: Կրկնեցի հարցու: Նորից պատասխան չկար:

Ել ավելի մոտեցա զոմին, նայեցի ներս, այնտեղ վոչ  
քեռի կար, վոչ ճրագ: Բայց դրանց փոխարեն տեսա մի  
զարմանալի բան. թափված գերանների ծայրերը մեղմ,  
սպիտակին ափող լուս ելին արձակում:

— Թուբեն, տես, կարծես՝ զոմը հրդեհ է ընկել:

Ցերկուսս միաժամանակ լուռ նայում ելինք լուս արձակող գերաններին:

— Բայց, շատ լավ, յեթե նրանք ալրվում են, ինչու  
նրանցից վոչ բոց ե բարձրանում և վոչ ել ծուխ—զար-  
մայած հաղորդի լես:



Բացի դրանից, լուսն ել մի տեսակ սպիտակավուն ե չե՞, վոչ նման կրակի լուսին—ասաց Ռուբենը:

Այս բոլորը մեզ կասկածի մեջ զցեց, և մենք փորոշեցինք մոտիկից նայել:

Յերկուսս ել ներս թռանք դոմը: Յերբ յես ներս թռա, փոտքս կպավ մի քարի, և յես վայր ընկա. այդ ժամանակ ձեռքս գիպավ գերաններից մեկի հենց լուս արձակող մասին: Անմիջապես ձեռքս յետ քաշեցի և վեր կացա:

Այդ նկատեց Ռուբենը և հարցրեց՝ մի տեսակ սարսափած:

— Այդ ի՞նչ եր, ձեռքդ այրվե՞ց:

— Ի՞նչպես կարող եր ձեռքս այրվել, նա այնպես սառն ե և խոնավ:

— Սառը և խոնավ,—զարմացած կրկնեց Ռուբենը և ինքն ել ձեռքը կացրեց լույս տվող մասերին.—վահ, ճիշտ վոր:

Այնուհետեւ մենք յերկար ժամանակ դիտում եցինք այդ գերանները և շոշափում նրանց լույս տվող մասերը: Ռուբենը մինչև անգամ պոկել եր մի գերանից մի փոքրիկ կտոր և, մտցնելով իր շապկի կոնկատեղը, հիանում եր նրա լուսով:

— Արի, մի մեծ կտոր պոկենք տանենք տուն,—առացի յես:

Ռուբենը կարծես հենց զրան եր սպասում: Անմիջապես գործի անցավ. նա մեկ այս գերանի ծալրից եր քաշում, մեկ՝ մյուս: Նույն անում ելի և յես:

Վերջը մի գերանի ծալրի վրա մի մեծ և խորը ձեղք տեսանք: Յերկուսս ել բանեցինք այդ ձեղքից և, ինչքան ուժ ունեցինք, սկսեցինք վեր քաշել: Քիչ անցած, գերանից պոկեց մի մեծ կտոր: Մեր բախտից պոկված կտորը գերանի ամենալուսավոր մասն եր: Հաջողությունից վորդերված՝ Ռուբենը մեն-մենակ պոկեց մի մեծ կտոր ես:

Ամեն մեկս, մի մի մեծ կտոր վերցրած, դուրս յեկանք դոմից և շտապով գնացինք տուն:

Սենյակում, ճրագի լուսի տակ, սկսեցինք ուշադրությամբ գննել այդ փայտերը. նրանց վրա թե յես և թե Ռուբենն առանձին վոչինչ չտեսանք:

Նրանք սովորական փատած փայտի կտորներ ելին, ուրիշ վոչինչ: Միայն դժբախտությունն այն եր, վոր նրանք այլևս լուս չելին տալիս:

Բայց այս ինչու մարեցին մեր փայտերը, միթե այլևս նրանք լույս չպիտի արձակեն,—տիսուր ձայնով հարցրեց Ռուբենը:

Դեռ չեր վերջացրել Ռուբենն իր խոսքը, վոր դրսից ճրագ ուզեցին: Յես իսկույն ճրագը ձեռքիս տարա:

Քիչ հետո, յերբ յես նորից ճրագը ձեռքիս սենյակ մտա, Ռուբենն ուրախ-ուրախ, բացագանչեց,—չեն մարել նրանք գեռ լուս են տալիս:

Պարզ եր, ինարկե, վոր նրանց խավարելու պատճառը ճրագն եր. վերջինիս ուժեղ լույսի տակ նրանց աղոտ լույսը նսեմանում եր այնպես, ինչպես ցերեկն աստղերի լույսը՝ արևի լուսի տակ:

Այստեղ իմ մեջ մի միտք ե ծագում—մեր սենյակում այդ լույս տվող փայտերից մի փոքրիկ աստղալից յերկինք պատրաստել:

Իմ այդ միտքը, յերբ հայտնեցի Ռուբենին, նրան շատ դուր յեկավ և մենք միասին գործի դիմեցինք: Ամեն մեկս մի-մի գանակ վերցրած՝ սկսեցինք փայտերից մեծ ու փոքր աստղեր պատրաստել: Դժվար չեր այդ գործը, փայտը փափուկ եր և գանակի տակ արագ կերպով ընդունում եր ցանկալի ձեր:

Քիչ անցած, յես և Ռուբենը շինել ելինք արդեն մի քանի տասնյակ աստղեր:

Այդ աստղերը պետք եր այժմ կպցնել թե պատերին և թե առաստաղին: Մենք վերցրինք քորոցներ և նրանց մի-

ջոցով սկսեցինք աստղերն ամրացնել: Պատերին շատ հեշտ եր ամրացնել, իսկ առաստաղին ամրացնելը դժվար եր, վորովիետե առաստաղը շատ բարձր եր: Ինչպես պետք ե բարձրանալ: Մի առ ժամանակ մենք մնացել ելինք շվարած: Բայց վերջը հնար գտանք: Մեծ սեղանի վրա դրինք փոքր սեղանը և նրա վրա կանգնելով առաստաղին աստղեր կպցրինք: Մի քանի անգամ մեծ սեղանի տեղը փոխելով սենյակի մեջ, կարողացանք վերջապես առաստաղի բոլոր մասերի վրա յել աստղեր կպցնել:

Ամեն բան պատրաստ եր արդեն: Հարկավոր ե այժմ մթնացնել սենյակը, փորպեսզի աստղերն սկսեն փայլվել:

Յեվ, իսկապես, յերբ ճրագը հանգցրինք, մեր աստղերը սկսեցին փայլվել պատերի ու առաստաղի վրա կանաչ-սպիտակավուն գույնով:

Յես և Ռուբենը յերկար ժամանակ դիտում ելինք այդ փոքրիկ գեղեցիկ աստղալից յերկինքը և զժալում:

Մեր աստղերը փայլեցին և յերկրորդ գիշերդ, բայց այս անգամ ավելի աղոտ լուսով, իսկ յերրորդ գիշերը բոլորովին մարեցին: Մարեցին նրանք, առանց փորեն բան ասելու իրենց լուսի մասին:

### ՍՈՒՆԿԵՐ ԿԱՆ, ՎՈՐ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԱԼԻՍ

Մեր շինած աստղերի վրա ցերեկը ինչ փոր թելեր նկատեցինք, վորոնք փայտի մեջ, զնալով զանազան ուղղություններով, մի ամբողջ ցանց են կազմում: Ի՞նչ բաներ այդ թելերի ցանցը, մենք չհասկացանք: Բայց կարծում ելինք, փոր լուսի և այդ թելերի մեջ ինչ փոր կապ պետք ե լիներ:

Յեվ մենք չելինք սիսալվում: Յերկու որից հետո, յերբ մենք հարցրինք այդ մասին մեր դիրողի ուսուցչին, նա հաստատեց մեր յենթաղրությունը: Նա մեզ պատմեց փոր այդ թելերը սունկեր են, փորոնք ապրում են փայտի մեջ և մնվում են նրա նյութերով:

Այն սունկերը, — ասաց նա, — փոր հովանոցի ձև ունեն և բուսնում են գետնի վրա, նրանք վոչ այ ինչ են, բայց յեթե սունկ կոչվող բուսի պատուղները. իսկական բույսը զանվում է հողի մեջ և այնտեղ թելերի մի ամբողջ ցանց է կազմում, ճիշտ այնպես, ինչպես դուք նկատել եք լուս տվող փայտի մեջ: Հողի մեջ զանվող սունկի թելիկները մնունդը վերցնում են հողի մեջ յեղած փատած նյութերից, իսկ փայտի մեջ լուս են արձակում հենց այդ թելիկները:

Յեթե վերցնեք այդ թելիկները և դնեք հացի վրա, այն ժամանակ հացն ել կսկսի լուս տալ փայտի պես: Բայց, ինչպես փայտը, այնպես ել հացը. պետք ե խոնավ լինեն. հենց փոր չորանան նրանք, կչորանա նաև սունկը և այ ևս լուս չի արձակի: Յեթե ձեր աստղերը միայն յերկու որ են լուս տվել, այդ պետք ե բացատրեք նրանով, փոր նրանք այդ ժամանակվա ոնթացքում չորացել են, յեթե գուք մեկ-մեկ ջուր սրսկեցիք նրանց վրա, նրանք անպայման մինչև այժմ ել լուս կտային:

Բացի գրանից, ուսուցիչը պատմեց նաև, փոր մեզնից հեռու յերկիրներում կան սունկեր, վորոնց լուս տվող մասը վոչ թե թելիկներն են, այլ հովանոցաձև պատուղները: Այնտեղ, վորտեղ բուսնում են, այդ սունկերը, գիշերը գետնի մակերեսուցիթը նմանում է աստղալից յերկների: Լուսն այդ սունկերի համար ահազին նշանակություն ունի, վորովիետե լուսի շնորհիվ այդ սունկերի վրա հավաքվում են մեծ թվով գիշերացին թիթեռներ և այ միջատներ, վորոնք, հեռանալով նրանցից, տանում են իրենց հետ սունկի սպորները և տարածում զանազան կողմերը: Այդ սպորներն, այնուհետև ընկնելով հարմարավոր տեղեր՝ ծլում են և առաջ բերում նոր սունկեր: Նշանակում ե, լուսատու սունկը տարածվում է միջատների միջոցով, վորոնց զրավում է նա իր մեղմ, սպիտակավուն լուսով:

Փատած փայտի պես, յերբեմն լուս են տալիս նաև

փտած տերեները: Աշնանը, յերբ տերեները թափվում են և սկսում փտել, փտելու ընթացքում, մի շրջանում, յերբ տերեների մուգ շոգանակի գույնը փոխարկվում է գեղինի կամ սպիտակավուն-դեղնի, այն ժամանակ սկսում են նրանք իրենցից սիպտակավուն լույս արձակել: Այդ կողմից աշքի յենընկնում մանավանդ մեզ մոտ բուսնող անտառալին ծառերից կաղնու և աճարու տերեները: Աշնանը, այն ժամանակ, յերբ այդ ծառերի թափված տերեները գտնվում են լույս արձակելու շրջանում, յեթե գիշերը մտնեք անտառը մի գեղեցիկ պատկեր կտեսնեք. անտառի գետինը վողողված կլինի մեղմ, սպիտակ լույսով: Իսկ յեթե այդ ժամանակ անտառի այս ու այն մասում թափված, փտած ու խոնավ ծառերն ել իրենցից լույս առձակեն, այդ գեղքում արդեն ձեր առաջ կբացվի մի հրաշալի տեսարան, վոր աճուտ հետեւ յերբեք չեք մոռանա ձեր ամբողջ կյանքում:

Ուսուցի այդ խոսքերն այնպիսի ապավորություն են թողնում մեզ վրա, վոր մենք վորոշում ենք աշնանը անպատճառ մի գիշեր մտնել անտառը և տեսնել լույս տվող տերեները:

— Յեթե չհաջողվի ձեզ տեսնել լույս տվող տերեներ անտառում—շարունակեց ուսուցիչը, — այն ժամանակ կարող եք աշնանը կաղնու և կամ աճարու թափված տերեներ հավաքել և պահել տանը մի բանկի տակ, վորպեսզի չը չորանան. այդ տերեները փտածն վորոշ շրջանում, ամենայն հավանակությամբ, կսկսեն լույս արձակել: Ասում եմ ամենայն հավանականությամբ, վորպիսեաւ նրանց լույսի աղբյուրն եւ վոչ թե իրենց փտած նյութն ե, այլ նրա մեջ ապրող մի փոքրիկ սունկ: Յեթե տերեկի մեջ այդ սունկը չկա, պարզ ե, վոր չի կարող և լույս տալ:

Այստեղ վերջացնում եւ ուսուցիչն իր խոսքը:

Մենք այդ որն իմանում ենք, վոր աշխարհում կան լույս տվող սունկեր, և վոր փտած փայտը ու տերեները

լույս են արձակում, շնորհիվ իրենց մեջ ապրող լուսատու սունկերի:

### ԼՈՒՍԱՏՏԻԿԸ

Նույն ամառը, հունիսին տաք որերից մեկին, մութն ընկնելուց հետո, յես և Ռուբենը մեր այգու ցանկապատի մոտ գտնվող նստարանի վրա նստած՝ նայում ելինք յերկնքին եւ վորոշում, թե աստղերի մեջ վորոնք են ամենից շատ աչքի ընկնում իրենց մեծությամբ ու փայլով:

Հենց այդ ժամանակ հանկարծ իմ ուշադրությունը գրավում է մի փոքրիկ թփի տակ կամաչավուն լույս արձակող մի մարմին:

— Տես, Ռուբեն, այն ինչ է աճնտեղ լույս տալիս, կարծես փոքրիկ աստղ լինի, յերկնքից վայր ընկած:

Խոսքս գեռ չվերջացրած, տեսնում եմ նման լույս արձակող մի այլ մարմին ևս, ապա մի յերրորդը:

— Տես, մեկն ել աճնտեղ ե, մեկն ել այն մյուս թփի տակ, վահ, ինչ շատ են:

— Յերեկի դրանք նույնպես փտած փայտի կտորներ են. արի հավաքենք,—ասում ե Ռուբենը:

Մոտեցանք նրանց, ուզում ենքնք բռնել, բայց յերբ նրանք սկսեցին շարժվել, մենք անմիջապես կանգ առանք:


— Ինչպես թե փայտի կտորներ են, տես՝ ինչպես են շարժվում:

Նրանց այդ շարժումը թեպետ և փոքր ինչ վախեցրեց մեզ, բայց ել ավելի զրգուց մեր հետաքրքրությունը:

Յես բռնեցի նրանցիդ մեկին, բայց շատ չկարողացա պահել, հենց վոր սկսեց նա շարժվել ձեռքիս մեջ, իսկույն վայր գցեցի:

Ռուբենը այդ տեսավ թե չե, իսկույն վերցրեց իմ վայր գցածը: Պետք է ասեմ, վոր նա այդպիսի կենդաներից բոլորովին չեր զզվում:

Յես հանեցի լուցկու տուփը, գատարկեցի և փոքրիկ կեսդանին զցեցինք նրա մեջ։ Այդ տուփի մեջ հավաքեցինք մի քանի հատ ևս և գնացինք տուն՝ ճրագի տակ նրանց մանրամասն դիտելու համար։



a c ε

Նկ. 1. Լուսատիկ

Ամենից առաջ պարզվեց, վոր այդ կենդանիներն ունեն մոտավորապես մեկ և կես սանտիմետր յերկարություն և շատ նման են սովորական վորդերին, այն տարբերությամբ միայն, վոր ունեն բղեղների նման լավ զարգացած յերեք զույգ վոտներ։

Մեր դիտողությունը պարզեց նաև, վոր նրանք լույս են արձակում իրենց մարմինի միայն մի աննշան մասից։ Ես մասը գտնվում ե նրանց մարմինի յետեկի կողմում, փորի ծալրին։ Նրանց փորը, ինչպես վորդերի և այլ բոլոր միջատների փորը, բաղկացած ե մի շարք ողակներից, բայց դրանցից լույս են արձակում միայն վերջին յերկուսը, այն ևս միայն ներքեւի յերեսներից, այսինքն գետնին նալող յերեսներից։ Յեվ այդ եր պատճառը, վոր նրանց լույսը տեսանելի յեր գառնում միայն այն ժամանակ, յերը նրանք իրենց պոչի ծալրը վեր են բարձրացնում։

Մենք իմացանք նաև, վոր այդ միջատը կոչվում ե լուսատիկ, այսինքն՝ լուսատու պոչ ունեցող։ մի անուն, վոր, ինչպես տեսնում եք, միանդամայն հարմարում ե նրան։

Բայց թե ինչու համար ե այդ միջատը լույս արձակում մենք այդ որը չիմացանք։

Այնուհետև անցան շատ տարիներ, և այդ ժամանակ-

վա ընթացքում մենք շատ բան իմացանք լույս տվող կենդանիների և բույսերի, ուրիշ կերպ ասած, կենդանի ձբրագների մասին։

Ամենից առաջ՝ իմացանք, թե լուսատիկն ինչու յելույս արձակում։

### ԹԵ ԻՆՉՈՒ ՅԵ ԼՈՒՍԱՏԻԿԸ ԼՈՒՅՍ ՏԱԼԻՍ

Դիտողությունները ցուց են տվել, վոր մեզ մոտ ապրող լուսատիկներից լույս են տալիս միայն եզերը։ Արուները զուրկ են այդ ընդունակությունից, բայց դրա փոխարեն ունեն ուժեղ ու զարգացած թևեր, վորոնցով հրաշալի կերպով կարողանում են թռչել։ Այդպես չեն եղերը։ Նրանց թևերն անքան փոքր են ու անզարգացած, վոր միանդամայն անպետք են թռչելու համար։ Յեվ այդ ե պատճառը, վոր արուներն ազատ ու արագ թռչկոտում են ողի մեջ, իսկ եղերն, անկարող լինելով թռչել, ստիպված սողում են գեանի վրա, այն ևս չափազանց դանդաղ։

Ուրեմն, արուներն ողի մեջ, իսկ եղերը գետնի վրա։

Հարց ե առաջանում, ի՞նչպես են հապա նրանք իրար գտնում։

Ահա թե ինչպես։

Հին ժամանակներում, յերը հեռագիր, հեռախոս ու հարմարավոր ճամապարհներ չկային, յերկրի բոլոր բնակիչներին փորեկ լույս հաղորդելու համար դիմում ելին մի շատ հասարակ միջոցի։ բարձր տեղերում մեծ խարուցիներ ելին վառում։ Խարուցիների տեղն ու թիվը նշաններ ելին, վորոնցով հասկանում եր ժողովուրդը, թե ինչ նշանավոր դեպք ե տեղի ունեցել յերկրի սահմաններում և թե ի՞նչ պետք ե անել։

Նշանակում ե, մարդիկ լույսից ոգտվում ելին այս կամ այն լուրը հեռավոր տեղեր հաղորդելու համար։

Նույն ձեռվ լույսից ոգտվում են նաև այժմ։ Հրթիռների միջոցով պատերազմի ժամանակ զանազան լուրեր

ու հրամաններ են հաղորդում զորապետներն իրենց զորքերին:

Գիտնականների փորձերը ցույց են տվել վոր լուսատիկները նույնպես կարողանում են ողտվել լուսից: Յեզ այդ շատ հասարակ ձեռվ:

Թեերից զուրկ եգերն իրենցից լույս են արձակում. արուները, վորոնք ողի մեջ թռչում են այս ու այն կողմը, նկատում են այդ լույսը և գալիս գտնում նրանց:

Վոր իսկապես արուներն այդ ձեռվ են գտնում եգերին, հաստատվել ե բազմաթիվ փորձերով և դիտողություններով:

Մի գիտնական, որինակ, կատարել ե մի այսպիսի փորձ: Վերցրել ե յերկու եգ լուսատիկ և փակելով նըրանց մի ապակյա խողովակի մեջ, դրել ե գիշերը մարդագետնում՝ խոտերի վրա:

Խեղճ լուսատիկներն իրենց փորբիկ բանտի մեջ մի վորոշ ժամանակ դադարել են լույս տալուց: Սակայն, այդ դրությունը յերկար չի տևել, նրանք հաշտվելով իրենց վիճակի հետ՝ սկսում են լույս արձակել: Այդ լույսի վրա կարծ ժամանակից հետո ապակյա խողովակի մոտ հավաքվել են ահազին թվով արուներ:

Սովորաբար, միջամաները գտնում են իրար հոտի ողնությամբ: Այստեղ, իհարկե, հոտի մասին խոսք չեր կարող լինել, վորովհետև նրանք, փակված լինելով ապակյա խողովակի մեջ, չելին կարող հոտ հարձակել:

Մեզ մոտ ապրող լուսատիկներից լույս են արձակում միայն, ինչպես ասացինք, եգերը, սակայն տաք յերկիրներում ապրող լուսատիկները լույս են տալիս անխափի բոլորը, թե եգերը և թե արուները:

Ահա նույն գիտնականը նման փորձ կատարել ե նաև այգափսի լուսատիկների վրա: Ապակյա խողովակի մեջ փակված եգերն այստեղ ևս սկզբում լույս չեն տվել: Բայց քիչ ժամանակից հետո, յերբ ապակու վերեից, ողի

միջով անցել ե մի արու լուսատափկ, իրենից մեղմ լույս արձակելով, բանստարկյալներն անմիջապես պատասխանել են նրան նույնպես լույս արձակելով: Արուն, նկատելով այդ, ուժեղացրել ե իր լույսը: Ուժեղացրել են նաև եղերն իրենց լույսը: Այսպես մի առժամանակ, արուն ոդում, եգերն ապակյա խողովակի մեջ խոսել են իրար հետ լույսի միջոցով. վորից հետո արուն իջել ե և սկսել պտտվել ապակյա խողովակի շուրջը:

Մի կամ յերկու ժամից հետո նույն ձեռվ այստեղ ևս ապակյա խողովակի մոտ բազմաթիվ արուներ են հավաքվել:

Այս փորձերը պարզ ցույց են տալիս, վոր լուսատիկները գտնում են իրար լույսի միջոցով:

### ՏԱԲ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱՏՈՒ ՄԻՋԱՏՆԵՐԸ

Տաք յերկիրներում ապրաղ լուսատու միջատները չափազանց ուժեղ լույս են արձակում իրենցից: Այդ տեսակետից առանձնապես աչքի յեն ընկնում Ամերիկայի տաք յերկիրների միջատները: Այնտեղ կան մի տեսակ լուսատու միջատներ, վորոնք հրեղեն ճանճեր են կոչվում: Սրանք այնքան ուժեղ լույս են արձակում իրենցից, վոր առաջները, յերբ գեռ այստեղ զանազան տեսակի ճրագներ չը կային, զյուղացիներն իրենց խրճիթները նրանցով եյին լուսավորում: Յեզ իսկապես, նրանց մի քանի հատն այնքան լույս ե արձակում, ինչքան միջին տեսակի մի նավթի ճրագ:

Պատմում են, թե մի անգամ, յերբ անգլիացիներն, իջնելով իրենց նավերից, ցանկանում են մտնել ցամաքի խորքը, նկատում են նեսվում բազմաթիվ ճրագներ: Յենթադրելով, թե դրանք իրենց թշնամիների ճրագներն են, փախենում են և յետ դառնալով նստում են իրենց նավերը և փախչում:

Տակայն, շուտապ պարզվում ե, վոր այդ ճրագները

վոչ այլ ինչ են յեղել, բայց յեթե լուսատու միջատներ:

Այդ լուսատու միջատների մեջ իր լույսի գեղեցկությամբ և ուժեղությամբ աչքի ե ընկնում առանձնապես մի բգեգ՝ վոր կոկույս յե կոչվում:

Մի նշանավոր ճանապարհորդ, նկարագրելով Ամերիկայի այդ յերկիրներում կատարած իր ճանապարհորդությունը, պատմում է, թե այնտեղ շատ տեղերում մարդիկ այդ միջատները բոնում և դնում են դատարկած դգումի մեջ և կախում մի բարձր տեղից: Դգումի վրա բաց արած բազմաթիվ անցքերից միջատներից լույսը դուրս ճառագայթելով, լուսավորում է իր շուրջը: Այդպիսի դգումները կատարում են այնտեղ ճիշտ նույն գերը, ինչ վոր մեզ մոտ լապտերներն ու ջահերը:

Յերբեմն պատահում է, վոր լուսատու միջատներն ահագին թվով հավաքվում, խմբվում են վորևե դաշտում, այդ ժամանակ դաշտը վողողվում է նրանց առատլուսով և նմանում մի գեղեցիկ աստղալից յերկնքի:

Լուսատու միջատները մեծ բազմությամբ ապրում են և այդ յերկիրների անտառներում: Յեվ շնորհիվ հենց այդ միջատների յե, վոր գիշերները մարդիկ կարողանում են ճանապարհորդություններ կատարել այնտեղի անտառներում: Յերբ այդ միջատները մեծ թվով հավաքվում են անտառի վորևե մասում, առաջանում ե մի վերին աստիճանի գեղեցիկ պատկեր: Ծառերն այդ ժամանակ կարծես զարդարվում են լապտերներով: Յեվ, վորովհետեւ տարբեր տեսակի միջատներ տարբեր գույնի լույս են արձակում, դրա համար ել առաջանում ե բազմազան գույներով մի հրաշալի հրավառություն:

Բացի ճանապարհը լուսավորելուց, այդ միջատները ճանապարհորդներին տալիս են և մի այլ ոգուտ: Այդ տաք յերկիրներում ապրում են հսկայական քանակությամբ թունավոր ոձեր, վորոնք ահագին քսաներ են պատճառում ճանապարհորդներին:

Սակայն, հայտնի յե, վոր ոձերն առհասարակ վախենում են լույսից, կրակից և աշխատում են փախչել նրանցից: Ահա այս ե պատճառը, վոր այդ յերկիրներում թե տեղացիները և թե ոտար ճանապարհորդները, գիշերները ոձերից պաշտպանվելու համար դիմում են լուսատու միջատների ոգնության: Նրանք վերցնում են այդ միջատները և ամրացնում իրենց շորերի զանազան մասերում: Այդ վիճակի մեջ նրանք իրենցից առատ լույս են արձակում և այդ լույսով վախեցնում ու փախցնում թունավոր ոձերին:

Լուսատու միջատները մի այլ գեր ել են կատարում այդ յերկիրներում: Շատ տեղերում նրանք կանանց համար զարդի տեղ են ծառալում: Կանայք բռնում են նրանց և տեղավորում իրենց մազերի մեջ և կամ քողից կարած փոքրիկ քսակների մեջ գնելով ամրացնում են իրենց հագուստների զանազան մասերում: Յերբեմն նրանցից կանայք ապարանջաններ և մանյակներ են պատրաստում: Խոսք չկա, վոր այդ բգեզները շատ ավելի լավ են փայլում ու լույս տալիս, քան ամենաթանկագին աղամանդները:

Այդ ծառալության համար կանայք վարձատրում են լուսատու միջատներին իրենց ուշադիր ինսամքով: Ամենից առաջ, կերակրում են նրանց համեղ նյութերով, այն եւ շաքարեղեգնի փոքրիկ կտորներով, իսկ շաքարեղեգնը այդ միջատների ամենասիրելի կերակրուն եւ: Բացի զրանից, որական յերկու անգամ ել լողացնում են նրանց ջրով, վորովհետեւ առանց խոնավության այդ կենդանի աղամանդները շուտով աղոտանում են և վերջն ել բոլորովին գաղարում լույս տալուց:

Շաքարեղեգնի սիրահար լինելով, այդ միջատները մեծ բազմությամբ ապրում են շաքարեղեգնի տնկարաններում: Յեվ այդ ե պատճառը, վոր հաճախ շաքարեղեգնի ցողունների հետ տարվում են աշխարհի զանազան կողմերը:

Պատճում են, վոր մեզնից մոտ 150 տարի առաջ Ա-

ձերիկայից շաքարեղեգնի հետ միասին Յեվրոպա բերված այդ միջատները մի զիշեր մի մեծ քաղաքում թուչելով այս ու այն կողմը՝ այնպիսի ուժեղ տպավորություն են թողնում կրօնական նախապաշարումներով կուրացած ժողովրդի վրա, փոր բոլորը սարսափահար փախչում, տներն են մտնում և սկսում աղոթել այնտեղ:

Ամերիկայից հետո լուսատու միջատներով հարուստ է Հնդկաստանը, մանավանդ նրա անտառուտ և տաք մասերը:

Մի ճանապարհորդ պատմում ե, վոր այնտեղ յեթե յերեկոյան նստեք պատշզամբում ճրագի լույսի տակ, շուտով ամեն կողմից այնքան լուսատու միջատներ կհավաքվեն և կթափվեն սեղանի վրա և այնպիսի ուժեղ լույս կարծակեն իրենցից, վոր ճրագի լույսը նրանց մոտ կսկսի նսեմանալ:

Շատ գեղեցիկ պատկեր են տռաջ բերում այդ կենդանի աղամանդիները մանավանդ սենյակում, յերք նստում են հատակի, առաստաղի, պատերի և սենյակում գտնվող զանազան կահ-կարասիների վրա։ Ականատեսների պատճելով, այդ պատկերը գժվար է նկարագրել։ հարկավոր ե անպայման տեսնել, համենայն դեպս, նրանք պետք ե, վոր շատ ավելի գեղեցիկ լինեն, քան փտած փալտից շինած մեր աստղերը։

Հուսատու միջամներն այնտեղ մեծ առատությամբ լինում են մանավանդ նոյեմբեր և գեկեամբեր ամիսներին:

Մեր լուսատափկի նման այդ բոլոր լուսատու միջատ-ները լույսն արձակում են իրենց փորի վերջին ողակների ներքեփի յերեսներից։ Նրանց մարմինի այդ մասը, պետք է ասել, փոր շարունակ քսվում է կամ գետնին և կամ զա-նազան մարմիների, զբա համար ել բնական է. փոր հեշտությամբ կարող է կեղտոտվել, իսկ կեղտոտվելով, պարզ է, փոր այլև չի կարող իրենից փայլուն լույս արձակել. չե՞ փոր կեղտոտված ճրագն ևս լավ լույս չի տալիս։

Սակայն, դիտողությունները ցուց են տվել, վոր այդ  
միջատների լուսատու մասերը յերբեք չեն կեղտոտվում:  
**Պահանջառ:**

Պատճառը պարզ է: Նրանք իրենց վրա ունեն փոք-  
րիկ ու բարակ թելիկներ, փորոնցով շարունակ մաքրում  
են իրենց լուսառու մասերը:

Նշանակում ե, այդ միջատները վոչ միայն ճրագ ու-  
նեն, այլ և ունեն այդ ճրագը մաքրելու խողանակ:

U. S. AIR FORCE

Ի՞նչի շնորհիվ են լույս տալիս այդ միջամաները:

Փորձերը ցուց են ավել, վոր այդ միջատները չու-  
րացնելուց հետո ևս լուս են արձակում, հենց վոր նը-  
րանց թագացնում են: Ճիշտ ե, այդ յերկույթը դեռ ևս  
բոլորովին պարզված չի. բայց շատերը կարծում են, վոր  
այդ միջատների մեջ ապրում են վերին աստիճանի փոք-  
րիկ եյակներ, վորոնք և առաջ են բերում այլ լուսուն:

Այդ ելակներն աշխարհիս պատիկ ու ճատիկներն են։  
Ծանոթանանք նրանց։

ԱՇԽԱՐՀԻՍ ՊԱՏԻԿ ՈՒ ՃԱՏԻԿՆԵՐԸ


Կան Եյակներ, վորոնք այնքան փոքր են, վոր աչքով միանգամայն անտեսանելի լեն: Այդ Եյակներին տեսնելու համար մարդիկ զիմում են մի զործիքի ոգնության, վոր



մանրադիտակ ե կոչվում. այս գործքը մեծացնում է մարմինները հարյուրավոր ու հազարավոր անգամ: Մեծացրու մարդը տաս անգամ և տես ինչպիսի սարսափելի բան կը դառնա նա. բայց արի տես, վոր յերբ մանրադիտակի միջոցով մեծացնում ես այդ փոքրիկ երակներին վոչ թե տասը կամ հարյուր, այլ հազարավոր անգամ, նրանք հազիվ ընդամենը մի կետի մեծություն են ստանում վոչ ավել և վոչ պակաս: Այդ գեռ բավական չե. կան նրանց մեջ և այնպիսիները, վորոնք անտեսանելի յեն մսում նույնիսկ հազարավոր անգամ մեծացնելուց հետո:

Ահա այդ երակներն են աշխարհի պստիկները. նրանք վոչ միան պստիկ են՝ այլ և ունեն չափազանց պարզ կազմություն, լորձանման նյութի մի փոքրիկ աննշան մասնիկ՝ շրջապատված բարակ ու նուրբ մաշկով. ահա նրանց ամբողջ կազմությունը: Ձևին նախած՝ նրանք լինում են կամ գնդաձեւ և կամ ձողաձեւ: Չողաձևները լինում են կարճ կամ յերկար, հաստ կամ բարակ, կորացած, ուղիղ և կամ վոլորված, զսպանակի ձևով:

Նրանք իրենց վրա յերբեմն ունենում են բարակ, երկար թելիկներ, վորոնք մտրակներ են կոչվում: Այս մըտրակներով նրանք շարժումներ են կատարում: Յեկ այդ ահա թե ինչպես: Հեղուկի մեջ գտնված, ժամանակ տատանեցնում են նրանք իրենց այդ մտրակները, դրանով հեղուկի մեջ առաջ են բերում շարժումն և այդ շարժումն ել նրանց տանում և այս կամ այն կողմը: Ինչքան շատ և յերկար են այդ մտրակները և ինչքան երակը նրանց ճարպիկ կերպով և տատանեցնում, այնքան և արագ և շարժում նա:




Նկ. 2 Բակտերիաներ

թյունը: Ձևին նախած՝ նրանք լինում են կամ գնդաձեւ և կամ ձողաձեւ: Չողաձևները լինում են կարճ կամ յերկար, հաստ կամ բարակ, կորացած, ուղիղ և կամ վոլորված, զսպանակի ձևով:

Բացի գրանից, նրանք են առաջ բերում նաև զանազան մարմինների նեխումն ու փտումը: Յեթե վորևէ կենդանի մեռնելուց հետո սկսում ե հոտել, նեխվել, քարքայվել կամ յեթե վորևէ տեղ ընկած փայտ վորոշ ժամանակից հետո սկսում ե փոտել, պատճառն այդ երակներն են:

Զնայած իրենց աննշան մեծության ու հասարակ կազմության՝ այդ երակները չափազանց մեծ գործ են կատարում աշխարհում: Նախ և առաջ պետք ե ասենք, վոր մարդկանց մեջ տարածված բոլոր վարակիչ հիվանդությունների պատճառը նրանք են: Խոլերան, տեսակ-տեսակ տիֆերը, գիֆտերիտը, թո-

նկ. 3. Դիֆտերիտ բակտերիաներ քախությունները, վորոնք ամեն տարի ահազին թվով գոհեր են տանում, առաջ են բերում այդ փոքրիկ երակները: Կովերի, վոչխարների, ձիերի, խոզերի, նույնուկներ և հավերի հնագ-



նկ. 4 Խոլերայի և շամայի բակտերիաներ կահավերի և այլ ընտանի կենդանիների ու թոշոնների մեջ տարածվող վարակիչ հիվանդությունների պատճառը դարձյալ այդ երակներն են:

Բացի գրանից, նրանք են առաջ բերում նաև զանազան մարմինների նեխումն ու փտումը: Յեթե վորևէ կենդանի մեռնելուց հետո սկսում ե հոտել, նեխվել, քարքայվել կամ յեթե վորևէ տեղ ընկած փայտ վորոշ ժամանակից հետո սկսում ե փոտել, պատճառն այդ երակներն են:

Նշանակում ե, յեթե չլինելին այդ երակները, այն ժամանակ աշխարհում վոչ վարակիչ հիվանդություններ կլինին և վոչ ել մեռտծ մարմինները կնեխվելին, կր-

փտելին:

Բայց դրանով դեռ չի վերջանում մեր պստիկ ե, ակ-



Ների կատարած գործը. նրանք են կաթը թթվեցնում, դինին քացախեցնում, կերակուրները փշացնում և ալին:

Այս բոլորից հետո միթե զարժանալի յէ, վոր նրանց անվանում ենք պստիկ ու ճատիկներ:

Բայց ի՞նչպես են նրանք այդպիսի մեծ-մեծ գործեր կատարում:

Ասված ե. «Գեղ կանգնի, գերան կկոտրի»: Այս առածը կարծես հենց դրանց համար ե ասված: Առանձինառանձին վերցրած նրանք վոչինչ բաներ են, բայց յերբ հավաքվում են հազարներով, միլիոններով միասին, ինչեր ասես, վոր չեն կատարում:

Հարց ե առաջանում, վ՞րտեղից են հապա հավաքվում նրանք այդպես մեծ բազմությամբ:

Նրանք կարիք չունեն այս ու այն տեղից հավաքվելու: Յեթե նրանցից մեկն ընկնում ե այնպիսի տեղ, վորտեղ նրա համար առատ կերակուր կա, մոտ քան բովելից հետո դառնում ե եր առաջվա մեծության կրկնապատիկը: Այդ ժամանակ նրա միջին մասը սկսում ե հուզ գալ, բարակել և վերջը եյակը բաժանվում, դառնում ե յերկուսը: Այսուհետեւ ամեն մի կեսը սկսում ե իրեն համար առանձին կրանք վարել և շրջապատից կերակուր ընդունելով՝ կամաց-կամաց մեծանալ: 20 բովելից հետո նրանցից ամեն մեկը դարձյալ մեջ տեղից բաժանվում ե և դառնում յերկուսը: Յեկ այսպես շարունակ: Նշանակում ե, մի ժամից հետո մի եյակից այդ ձևով կարող ե առաջանալ 8-ը, 2 ժամից հետո՝ 64-ը 3 ժամից հետո՝ 512, 4 ժամից հետո՝ 4096, բայց այդ միայն չորս ժամից հետո, իսկ 24 ժամից հետո նրանք այնպիսի չափերի կհասնեն, վոր նրանց թիվը մենք բոլորս կդժվարանանք կարդալ:

Գիտնականները հաշվել են, վոր այդպիսի մի եյակից չորս կամ հինգ որվա ընթացքում այդ ձևով կարող են առաջանալ այնքան եյակներ, վոր աշխարհիս վրա գտնված

բոլոր ծովերն ու սվկիանոսներ չեն կարող նրանց բոլորին տեղափորել իրենց մեջ:

Ահա թե ինչու յեն կարողանում այդ եյակներն այնքան մեծ-մեծ գործեր կատարել:

Այս պստիկ ու ճատիկ եյակներին ասում են բակտերիաներ:

### ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ ԿԱՆ, ՎՈՐ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԱԼԻՍ

Յերբեմն պատահում ե, վոր մառանում պահվող միսն իրենից մեղմ լույս ե արձակում, տանտիկիններն ալդպիսի դեպքերում սարսափած միսը դեն զցում և ով գիտե, թե ինչպիսի բացատրություններ են տալիս: Սակայն այսոր գիտությունը պարզել ե այդ յերեսույթի պատճառը: Բանից գուրս ե գալիս, վոր այդտեղ դեր են կատարում բակտերիաները, այսինքն մեզ ծանոթ պստիկ ու ճատիկ եյակները: Նրանց մեջ կան մի քանի տեսակներ, վոր իրենցից բույս են արձակում. ահա այդ լույս արձակող բակտերիաները, յերբ ոդից ընկնում են մսի վրա, սկսում են արագ կերպով բազմանալ նրա մեջ, վորի համար և միսը սկսում ե լույս տալ:

Լույս տվող միս ստանալն այնքան ել գժվար չի. դրա համար պետք ե վերցնել թարմ տավարի միս, կարել նըրանցից մի կտոր, մոտակորապես բուռնցքի չափ և զցել մի ապակյա անոթի, որինակ, բանկի մեջ: Այսուհետեւ պետք ե մսի վրա ածել աղաջուր, բայց այնքան վոր, մսի մի մասը մնա աղաջրից վերև: Այդ անելուց հետո պետք ե միս պարունակող անոթը գնել մի զոլ տեղ:

Աղաջուր պատրաստելու համար 100 կշռամաս ջրի մեջ պետք ե լուծել միայն յերեք կշռամաս աղ. աբսինքն յեթե վերցրել եք 100 զրամ ջուր, պետք ե լուծեք նրա մեջ միայն 3 զրամ աղ:

Զոլ տեղում պահվող մսի վրա 1—2 որից հետո կը նկատեք սկզբում աստղանման փայլ ունեցող կետեր: Այդ

կետերն այնուհետև հետզհետե մեծանալով՝ կդառնան մեծ-  
մեծ լուսատու նշաններ և վերջը կսկսի լույս տալ մսի  
ամբողջ մակերեսութիւն:

Յեթե ձեր առաջին փորձն անհաջող անցնի, կատա-  
րեցեք նույն փորձը մի ալ կտոր մսի վրա: Գիտնական-  
ների փորձերը ցուց են տվել, վոր 100 փորձից մոտ 90  
հաջող ե անցնում:

Բացի մսից, կարող եք ստանալ և լույս տվող ձու:

Արդպիսի ձու ստանալու համար պետք է վերցնեք ձուն  
յեփեք մոտ 8 ըոսկե և ապա թողնեք, վոր սառչի: Այնուհետև  
պետք է կոտրեք նրան թեթև կերպով վորևէ ամուր բանի  
խփելով և ապա առանց կեղեք հեռացնելու գլորեք մի կր-  
տոր տափակ և հարթ մակերեսութիւն ունեցող մսի վրա-  
դրանով մսի վրայից լուսատու բակտերիաները կեղեկի վրա  
գտնվող աչքերի միջով կմտնեն ձվի մեջ, ուրիշ կերպ ա-  
սած, ձուն կվարակվի լուսատու բակտերիաներով: Այդ  
անելուց հետո ձուն պետք է դնեք մի անոթի մեջ և ա-  
ծեք նրա վրա աղաջուր և դարձյալ այնքան, վոր ձվի մի  
մասն աղաջուր դուրս մնա: 1—3 որից հետո կեղեքի կոտ-  
րած մասերում կնկատեք լուսատու բծեր, լույս կտանակ  
հեղուկը, մանավանդ ձվի շուրջը: Լույսը դուրս կդա սո-  
վորաբար կեղեքի տակ գտնվող սպիտակ թաղանթից և ձվի  
սպիտակուցի մակերեսութիւն: Զորբորդ որը լույսը բավա-  
կանին ուժեղ կլինի, բայց այնուհետև կսկսի հետզհետե  
թուլանալ:

Մսի նման հաճախ լույս են տալիս նաև ձկները:

Ահա թե ի՞նչ ե պատմում մի գիտնական այդ մասին:

«Մի անգամ յես,—ասում ե նա,—մտա մառանը,  
փորտեղ ձկնավաճառը պահում ե իր ձկները: Իմ առաջ  
բացվեց անտեղ մի զարմանալի տեսարան, վոր յերբեք  
չեմ կարող մոռանալ: Բազմաթիվ կողովների մեջ ածված  
ելին հարյուրավոր ու հազարավոր մեծ ու փոքր ձկներ:  
Այդ ձկների մակերեսութիւն վրա փալլիում ելին անթիվ

անհամար փոքրիկ լուսատու կետեր, ճիշտ այնպես, ինչ-  
պես աստղերը յերկնքի վրա: Յեվ ինչքան իմ աշքն ավե-  
լի յեր ընտելանում մթության, այնքան ձկների վրա յե-  
րեացող այդ կետերն ավելի ելին մեծանում, յերբեմն թր-  
վում եր ինձ, թե ձկների ամբողջ մակերեսութիւն միապա-  
ղաղ արծաթանման սպիտակ լույս ե արձակում իրենից:  
Կողովների մոտ կանգնած յերեխաները հիացած այդ տե-  
սարանից՝ չարաճճիություն ելին անում, նրանք իրենց  
մատը կպցնում ելին ձկների լուսատու մասերին և յերբ  
հեռացնում ելին, լույս եր տալիս նաև նրանց մատը: Շար-  
ժելով իրենց այդ լույս արձակող մատը՝ նրանք լուսափոր  
գծեր ելին առաջ բերում ողի մեջ: Այդ բոլորը յերեխա-  
ներին շատ մեծ զվարճություն եր պատճառում»:

Լույս տվող բակտերիաներն աճում են միայն թարմ  
մսի, ձկան և ձվի մեջ, այդ պատճառով ել յերբ այդ մը-  
թերքները լույս են արձակում, այդ նշան ե, վոր նրանք  
դեռ թարմ են: Հենց վոր նրանք հնանում են և սկսում  
նեխվել բարքարիկե, լույս տվող բակտերիաները փշանում են:

Գիտնականները փորձել են այդ բակտերիաները բազ-  
մացնել զանազան տեսակի սննդարար հեղուկների մեջ և  
նկատել են. վոր նրանք շատ հաջող կերպով աճում են  
բուկիոնի մեջ: Բացի զբանից, նկատել են նաև, վոր սնն-  
դարար հեղուկների մեջ աճող բակտերիաներն իրենցից  
շատ ավելի ուժեղ լույս են արձակում, քան մսի և ձկան  
մեջ աճողները:

Ահա այս ե յեղել պատճառը, վոր մի գիտնական մը-  
տածել ե պատրաստել նրանցից կենդանի ճրագներ: Յեվ  
նրա փորձերը տվել են շատ հաջող հետեանքներ: Նա իր  
պատրաստած կենդանի ճրագներով լուսափորել ե պայծառ  
կերպով վոչ միայն փոքրիկ սենյակներ, ալ և մեծ դահ-  
լիճներ:

Կենդանի ճրագները պատրաստում ե նա շատ հասա-  
րակ ձեռվ. վերցնում ե ուռուցիկ փորով պալակա մի անոթ,

լցնում սննդաբար հեղուկով, որինակ, բուլիոնով և ապա  
ածում նրա մեջ բակտերիաներ պարունակող հեղուկից մի  
քանի կաթիլ: Այս մի քանի կաթիլի մեջ գտնվող բակտե-  
րիաները կարճ ժամանակում բազմանում են նրա մեջ ա-  
նասելի բազմությամբ, վորի համար անոթն սկսում է ի-  
րենց լույս արձակել: Յեթե այդպիսի մի մեծ անոթ կա-  
խենք առաստաղի մեջտեղից և նրա վերևում ել ամրաց-  
նենք սպիտակ փայտուն մետաղից պատրաստած մի գոգա-  
վոր լուսամփոփ, վորն իր վրա ընկած լույսը լեռ դարձ-  
նելով ցրում է սենյակի մեջ, այն ժամանակ կտանանք  
բավական առատ լույս:

Փորձերը ցուց են ավել, վոր այդ ձեռվ պատրաս-  
տած կենդանի ճրագները կարող են ելեքտրական ճրագ-  
ների չափ լույս առաջ բերել, այնպես վոր նրանց տակ  
կարելի յե ազատ կերպով գրել, կարգալ և զանազան տե-  
սակի մասր աշխատանքներ կատարել: Բացի դրանից, նր-  
անք բարվական տեսական են: Նպաստավոր պայմաններում  
կարող են նրանք վոչ միայն մի քանի գիշեր, այլ և մի  
քանի ամիս շարունակ լույս տալ իրենց շրջապատին:

Կենդանի ճրագները նոր են, գեռ լայն տարածում չեն  
գտել, բայց ով գիտե, գուցե վաղը կամ մյուս որը դառ-  
նան նրանք նույնպիսի անհրաժեշտ պարագաներ, ինչպես  
այժմ ելեկտրական ճրագներն են:

Պետք ե ասենք, վոր կենդանի ճրագներն ունեն մի  
հասուլություն, վորից զուրկ են Խյուս բոլոր ճրագները:  
Նրանք արձակում են իրենցից սառը լույս, մինչդեռ մյուս  
ճրագները արեգակի նման լույսի հետ միասին արձակում  
են նաև տաքություն:

Տեխնիկան շատ վաղուց ե ձգտում ստանալ սառը  
լույս, բայց այդ նրան մինչեւ այժմ գեռ չի հաջողվել ստա-  
նալ. իսկ բնությունն, ինչպես տեսնում եք, լույս տվող  
կենդանիների և բույսերի միջոցով վաղուց ե հասել այդ  
նպատակին:

## ԹԵ ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ԿԵՆԴԱՆԻ ՃՐԱԳՆԵՐԻ ԼՈՒՅՍԸ

Փորձերը ցուց են ավել, վոր կենդանի ճրագները  
լույս են տալիս միայն ողի մեջ: Այսպես որինակ, սըն-  
դարար հեղուկների մեջ գտնվող լուսատու բակտերիանե-  
րից լույս են տալիս միայն նրանք, վորոնք մոտ են զրտ-  
նվում մակերևույթին, այսինքն ողին: Ողն անհրաժեշտ ե  
կենդանիների և բույսերի շնչառության համար: Առանց  
ողի չկա շնչառություն: Իսկ շնչառությունը վոչ այլ ինչ ե,  
բայց յեթե մեզմ և դանդաղ կերպով կատարվող այրումն:  
Այրման համար անհրաժեշտ թթվածինը վերցնում են նրանք  
ողից: Յերբ կենդանին կամ բույսը զուրկ ե ողից, նշա-  
նակում ե, զուրկ ե նաև թթվածնից, այսինքն այն նյու-  
թից, վոր պահպանում ե այրումը. վրա համար ել կանգ ե  
առնում այրումն, ուրիշ կերպ ասած՝ շնչառությունը: Իսկ  
յերբ կանգ ե առնում շնչառությունը, կամ յերբ թուլա-  
նում ե նա, լույսը դադարում ե: Նշանակում ե, լույսն  
առաջանում ե շնչառության շնորհիվ:

Յեվ իսկապես, յեթե պատրաստենք սննդաբար մի  
հեղուկ և մեջը գցենք լուսատու բակտերիաներ, պարու-  
նակող հեղուկից մի քանի կաթիլ, մոտ յերկու որից հետո  
մեր պատրաստած հեղուկը կտկի արդեն լույս արձակել  
իրենից: Այդ հեղուկը յեթե ածենք մի բարակ, յերկար  
անոթի, որինակ, փորձանոթի մեջ, կտեսնենք, վոր լույս  
և տալիս միայն վերևի շերտը, այսինքն անմիջապես ողին  
կպած շերտը: Բայց յեթե մենք ցնցենք փորձանոթը, միան-  
գամից լույս կտա ամրող հեղուկը, վորովհետեւ ցնցման  
ժամանակ ողը մտնում ե և հեղուկի ներքեւ շերտերը:

Շատ ավելի գեղեցիկ տպագրություն ե թողնում,  
յերբ վերցնում են մոտ մի մետր յերկարությամբ նեղ  
խողովակ և լցնում լուսատու բուլիոնով մինչեւ համարյա-  
ծալը, թողնելով միայն մեկ և կամ կես սամափմետը  
տեղ ողի համար: Այդ խողովակի մեջ լուսատու բու-

լիոնը մոտ մի քառորդ ժամից հետո դադարում է լուս  
տալուց, բացի վերևի շերտից: Սակայն, յերբ մենք մա-  
տով ծածկում ենք խողովակի բերանը և շուռ տալիս, ա-  
նոթի մեջ գտնված չնչին քանակությամբ ողը պղպջակ-  
ների ձեռվ բուլիոնի միջով բարձրանում է վերև: Անա այդ  
ժամանակ բուլիոնն սկսում է դարձալ լուս արձակել իր  
բոլոր մասերից: Պատճառը պարզ է: Պղպջակների ձեռվ  
բարձրացող ողը թթվածին և մատակարարում բոլոր բակտե-  
րիաներին: Քառորդ ժամից հետո լուսը կրկին դադա-  
րում է, բայց յեթե կրկնենք մեր փորձը, բուլիոնը նորից  
լույս կարձակի իր բոլոր մասերից:

Յեթե կատարենք այս փորձը մթության մեջ, այն  
տպավորությունը կատանանք, թե բուլիոնի միջով ոդի հետ  
միասին հրթիռ է վեր բարձրանում:

Այս բոլորից տեսնում ենք պարզ կերպով, վոր կեն-  
դանի ճրագները լուս են արձակում միայն ոդի, կամ ա-  
վելի ճիշտ, նրա մեջ գտնված թթվածնի ազդեցության  
տակ: Բացի գրանից, տեսնում ենք նաև, վոր լուս առաջ  
բերելու համար անհրաժեշտ է չնչին քանակությամբ թթ-  
վածին:

Թե թթվածնի ինչպիսի քանակության է լույս առաջ  
բերում, պարզ կերպով ցույց է տալիս հետեւալ փորձը:

Յեթե վերցնենք մի բարակ յերկար խողովակի լցնենք  
լույս արձակող հեղուկով և զցելով նրա մեջ փորոշ քանա-  
կությամբ ջրային բուլիոր՝ պահենք մթության մեջ, կտես-  
նենք, վոր հեղուկը շուտով դադարում է լույս տալուց,  
բայց հենց վոր փորձանոթը դնում ենք արեի լույսի տակ,  
հեղուկը նորից սկսում է լույս արձակել իրենից:

Յեփ հասկանալի լե, թե ինչու:

Բույսի կանաչ մասերն արեի լույսի տակ ոդի ած-  
խաթթուն վեր են լուծում ածխածնի և թթվածնի: Ած-  
խածնը պահում են իրենց մեջ և միացնելով նրա հետ  
այլ նյութեր՝ պատճառատում են զանազան տեսակի բարդ

մարմիններ, իսկ թթվածինն արձակում են իրենցից: Ահա  
այդպես բարակ ու յերկար խողովակի մեջ գտնվող ջրային  
բուլիոնն ևս արեկ տակ արտադրում են իրենցից թթվա-  
ծին, վորի շնորհիվ և լուսատու բակտերիաները սկսում  
են լույս տալ: Սակայն բուլիոնի արտադրած այդ թթվա-  
ծինը չափազանց անհշան է, այնչափ անհշան, վոր քիմիա-  
կան ճանապարհով շատ դժվարությամբ է յերևան հանվում:

Լուսատու կենդանիների և բուլիոնի համար բացի  
թթվածնից, անհրաժեշտ է նաև ջուր կամ խոնավություն:  
Յեփ իրոք, հենց վոր նրանք չորանում են, դադարում են  
և լույս տալուց, ինչպես այդ տեսանք մենք փատած փերաբերմամբ:

Այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս, վոր  
կենդանիներն ու բուլիոնը լույս արձակելու համար պա-  
հանջում ես յերկու բան. թթվածին և խոնավություն: Կան  
այդ յերկուսը՝ նրանք ևս լույս են տալիս. իսկ յերբ պա-  
կասում ե զրանցից մեկն ու մեկը, ապա նրանք անմիջապես  
դադարում են լույս տալուց:

## ԿԵՆԴԱՆԻ ՃՐԱԳՆԵՐԸ ԾՈՎՈՒՄ

Ծովը շատ գեղեցիկ է գիշերը: Յերբ արեր մայր և  
մանուկ և մութը պատում է յերկիրը, այդ ժամանակ ծովի  
վրա այս ու այն տեղ սկսում են փայտել փոքրիկ աստղեր:  
Տեղանք նրանք մարում են կարճ ժամանակով և ապա  
նորից փայտում: Յերբեմն ել մի ահազին տարածության  
վրա ծովը սկսում է փայտել միապաղապաղ լուսով: Այդ լուս-  
ով առաջ են բերում լուսատու կենդանիները: Սրանց մեջ

գլխավոր տեղը դրավում են ծովի ճրագները: Ծովի ճրագները շատ փոքրիկ կեսդանիներ են, նրանց կարելի յետեսնել խոշորացուց ապակով. բայց չնայած դրան նրանք շատ ուժեղ լույս են առաջ բերում ծովի մակել:

Նկ. 5. Ծովային ճրագներ այն հանգամանքի, վոր հակասական բազմությամբ հավաքվում են վորոշ տարածության վրա, յերբեմն նրանք այնքան շատ են լինում, վոր ջուրը լորձանյութի նմանություն ե ստանում: Նավա այդպիսի տեղերով լողալու ժամանակ այն տպագորություն ե թողնում, թե լողում ե մի հրեղեն զանգվածի միջով:

Գեղեցիկ լույս են արձակում իրենցից և մեղուզաները, այդ զանգվակաձև կենդանիները, վորոնք վառած մեծ լապտերների ձևով դանդաղորեն տարուբերվում են ալիքների վրա: Մեղուզաներն արձակում են իրենցից զանգվան գույնի լույսեր, այդ պատճառով ել յերբ նրանք մեծ բազմությամբ հավաքվում են վորեւե տեղ, առաջ են բերում մի կատարյալ կախարդական հրավառություն:



Նկ. 6. Մեղուզան

Թե ծովի ճրագները և թե մեղուզաները սովորաբար լինում են ծովի մակերեսության շերտում, այնտեղ, վարտեղ ցերեկը թափանցում են արեի ճառագայթները: Անց-

նենք այդ շերտից գեղի ծովի խորքը, այնտեղ, վորտեղ այլևս արեկի ճառագայթները չեն հասնում:

Այդտեղ ևս կան բազմատեսակ կենդանիներ, վորոնք իրենցից զանգվան գույնի լույս են արձակում: Անա ձեզ ծառի պես ճյուղավորված կորալան պոլիպների դաղութը.




Նկ. 7. Լուսատու ծովասազը

Վորոնք ծովային տղմի մեջ սողում են այս ու այն կողմը: Վերջապես ահա ձեզ և լուսատու ձկներ, մեծ գլխով լախ բերանով, յերկար պոչով: Դրանք բոլորը իրենց տեսակ-տեսակ լույսերով մի գեղեցիկ տեսարան են առաջ բերում ծովի խորքում:

Ծովի մեջ զանգով կենդանի ճրագների մեջ առանձնապես հետաքրքիր են ձկները: Սրանք տարբերվում են ծովի վերևի շերտերում ապրող ձկներից ամենից առաջ իրենց աչքերով: Նրանց աչքերը չափազանց մեծ են, դուրս ցցված և խիստ մեծ բբերով: Յեզ միանգամայն՝ հասկանալի պատճառով: Իսչքան աչքը մեծ ե և բիբը խոշոր, այնքան աչքի մեջ շատ լույս կարող է մտնել: Յերբ լույսը թույլ ե, լավ կարելի յետեսնել միայն այդպիսի աչքերով: Յեզ գիշերային կյանք վարող կենդանիները հենց այդպիսի աչքեր ունեն: Այդ տեսակետից լավ որինակ կարող են լինել կատուն և նրա ցեղին պատկանող կենդանիները՝ առյուծը, վագրը և թռչուններից՝ բուն: Կատվի բբերը ցերեկը շատ փոքր են և նման վերեկց գեղի ցած գնացող նեղլիկ ճեղքերի, իսկ գիշերներն այդ վորբիկ բբերը մեծանում են, լախանում և բոնում համարյա ամ-

բողջ աշթը: Յեվ այդ ե պատճառը, վոր գիշերները նա շատ լավ ե տեսնում: Մեծ բբեր ունեն և գիշերային կյանք վարող բվի աչքերը:

Ծովի խորքում ապրող ձկները նման են գիշերային կենդանիներին, վորովհետև ծովի խորքն ևս մութ ե այսպես, ինչպես գիշերը յերկրի մակերեսութիւն վրա. այստեղ,



Նկ. 8. Լուսատու ձկներ

ինչպես տեսանք, լուս են սփոռում միայն լուսատու կենդանիները, վորոնց լուսը ինչքան ել պայծառ լինի, այնուամենանիվ չի կարող առաջ բերել ուժեղ լուսավորություն, մանավանդ վոր ջրի միջով լուսն այնքան ել լավ չի թափանցում: Հասկանալի յե, ուրեմն, վոր ձկները պետք ե ունենան մեծ աչքեր և մեծ բբեր:

Ձկների մեջ հաճախ տեսնում ենք և այնպիսիները, վորոնք բոլորովին զուրկ են աչքերից. բայց այսպիսի ձկները յերեմն լուս են արձակում իրենցից: Այդ լուսից նրանք ոգտվում են ուրիշ կերպ: Աչքերի փոխարեն ունեն նրանք չափազանց զգայուն բեխեր: Լուս արձակելով իրենցից, նրանք գրավում են գեպի իրենց զանազան տեսակի կենդանիներ, ճշշտ այնպես, ինչպես, գիշերը վառած ճրագը գեպի իրեն ե քաշում բազմատեսակ մժեղներ, թիթեռներ և ալին:

Յեվ ահա յերբ այդ կենդանիները լուսից զրավված մոտենում են նրանց, վերջիններս անմիջապես իրենց բեխերով զգում են նրանց մոտենալը և արագ կերպով վորսում են նրանց: Յեվ միանգումայն հասկանալի պատճառով: Դիտողությունները ցուց են ավել, վոր ինչքան կենդանութերանը մեծ ե, այնքան նա հաջող կերպով է վորս անում: Ողի մեջ միջատներ վորսող ծիծեռնակի բերանը շատ մեծ ե և մեծ ե նույն այդ պատճառով:

Սակայն լուսը տալիս է այդ ձկներին և մի այլ ոգուտ: Կան կենդանիներ, վորոնք լուսից վոչ թե զրավվում են, այլ ընդհակառակը, սարսափում են և փախչում: Ցամաքալին կենդանիների մեջ այդպիսիները շատ կան, որինակ, ոճերը, գայլերը և այլն: Ինչպես հայտնի յե, սրբանք չեն մոտենում լուս արձակող մարմինների: Լուսից սարսափող կենդանիներ կան և ծովի խորքում: Մեր կույր և միաժամանակ լուս արձակող ձկներն իրենց լուսով պաշտպանվում են ահա հենց այսպիսի թշնամիներից:

Եյս բոլորը ցուց են տալիս, վոր ծովի խորքը բավական հարուստ է կենդանի ճրագներով: Յեվ այդ զարմանալի չե բոլորովին: Ծովի խորքը մի մթին աշխարհ ե, այնտեղ կենդանի ճրագների կարիքը շատ ավելի մեծ ե, քան արեկի պայծառ ճառագայթներով վողողված ցամաքի վրա:



## ՑԱՆԿ

### ՑԵՐԵՄ

1. Թե ինչպես մեզ համար աստղալից յերկինք պատրաստեցինք . . . . .	3
2. Սունկեր կան, վոր լույս են տալիս. . . . .	6
3. Լուսատիկը. . . . .	9
4. Թե ինչու համար ե լույս տալիս լուսատիկը	11
5. Տաք յերկիրների լուսատու միջատները. . . . .	13
6. Աշխարհի պստիկ ու ճատիկները . . . . .	17
7. Բակտերիաներ կան, վոր լույս են տալիս	21
8. Թե ինչպես ե առաջանում կենդանի ճրագ- ների լույսը . . . . .	25
9. Կենդանի ճրագները ծովում. . . . .	27

«Ազգային գրադարան»



NL0143024

16802

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1.	Գաբրիելան Ռ.	—Միջատակեր բույսեր	.	.	15	կ.
2.	Լեբեգեվ Ի. Կ.	—Ինչպես և առաջացել լիրկիրը	.	.	30	»
3.	Գաբրիելան Ռ.	—Ովկիանի թագավորը	:	.	20	»
4.	Սարգսյան Ն.	—Կենդանին ճրագներ	.	.	25	»
5.	Սարգսյան Ն.	—Զարմանալի զենքեր	.	.	35	»
7.	»	—Ճագարամուկը,	.	.	25	»
		բղեղների յետկից	.	.	25	»
10.	»	—Մողեսների աշխարհում	.	.	25	»

---

ՀՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ ՆՈՒՅՆ ՍԵՐԻԱՅԻ

8.	Կարենցեվ	—Ելեքտրիֆիկացիայի պիոներ Եղիսոն
9.	Պիմենովա	—Ողաղարիկով դեպի բնեղություն

---

Դիմել Պետրասի բոլոր գրախանութեներին  
յևլ բաժանմունքներին

